

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 11/12

Քաղ. Երեւան

23 մայիսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Վ. Բաբայան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. մայիսի 23-ի նիստում (արձանագրություն N 4.2) քննարկեց «Վիթիս գրուպ» ընկերության ներկայացուցիչ Ս. Կնյազյանի կողմից 2012թ. ապրիլի 17-ին ներկայացված «ԿՕԲԿԵԳ» (հայտի համարը 20110200) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը: Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» Կարգի 116-րդ կետի 2-րդ և 119-րդ կետի 1-ին ենթակետերը, համաձայն որոնց, որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկվող նշանը չի գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է արդեն գրանցված «ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ» (N3188, «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ, Երևան, Իսակովի պող.2) ապրանքային նշանին: Ապրանքային նշանը ունի իմաստային նմանություն գրանցված համակցված ապրանքային նշանի հետ, այն է «ԿՕԲԿԵԳ» բառը ռուսերենից թարգմանաբար նշանակում է «ՏԱՊԱՆ» և սպառողների մոտ ասոցիացվում է նավի հետ, որը Նոյը կառուցել էր Աստծու պատվիրանով ջրհեղեղից փրկվելու համար:

Բողոքարկողը համաձայն չէ Գործակալության փորձաքննության որոշման հետ և գտնում է, որ բողոքարկված և գրանցված նշանները շփոթելու աստիճան նման չեն, հետևաբար, նշանը ենթակա է գրանցման և ներկայացնում է ստորև նշված հիմնավորումները և պատճառաբանությունները:

Բողոքարկողը նշում է, որ գրանցված և բողոքարկված նշանները իրենցից ներկայացնում են համակցված նշաններ և դրանց համեմատական վերլուծության դեպքում անհրաժեշտ է համեմատել երկու բառապատկերային համակցված նշանները: Բողոքարկողը իր վերլուծությունը հանգեցնում է նրան, որ նշանները շփոթելու աստիճան նման չեն և այն ապրանքները, որոնց համար ներկայացված են և գրանցված լրջորեն տարբերվում են միմյանցից:

Նշված է, որ գրանցման ներկայացված (մերժված) նշանի ԱԾՄԴ-ի 33-րդ դասում ընդգրկված են ավելի քան 35 ակոհոլային խմիչքներ և ապրանքատեսակներ, իսկ գրանցված նշանի իրավատերը ցանկացել է իր ապրանքային նշանով պահպանել բացառապես «բրենդի» խմիչքը (հայկական կոնյակը): Գրանցված նշանի իրավատեր՝ Երևանի կոնյակի գործարանը, կոնյակից բացի, այլ խմիչքներ չի արտադրում: Ի տարբերություն Երևանի կոնյակի գործարանի, բողոքարկված նշանի իրավատերն իր ապրանքային նշանի հայտում նշել էր ավելի քան 30 (երեսուն) ապրանքատեսակներ, որոնք ընդհանրապես չեն պահպանվում գրանցված նշանով: Ըստ բողոքարկողի, համեմատվող նշաններով պահպանվող ապրանքների միակ ընդհանրությունը և ավելի քան 30 անգամ գերազանցող տարբերությունները հաշվի առնելով, պետք է եզրակացնել, որ բողոքարկված և գրանցված նշաններով պահպանվող ապրանքները լրջորեն տարբերվում են միմյանցից:

Բողոքում նշված է, որ համաձայն Գործակալության մեկնաբանության, բողոքարկված և գրանցված նշանների «համընկնող իմաստը» կայանում է նրանում, որ «KOBЧЕГ» բառը ռուսերենից թարգմանաբար նշանակում է «SUՊԱՆ» և սպառողների մոտ ասոցացվում է նավի հետ, որը Նոյը կառուցել էր Աստծու պատվիրանով ջրհեղեղից փրկվելու համար, նույնիսկ, եթե սպառողների մոտ նման ասոցիացիա առաջանա դա ոչ մի կերպ չի նշանակում, որ համեմատվող նշանները շփոթելու աստիճան նման են և (կամ) սպառողներն անպայման կշփոթվեն: Բողոքարկողը պնդում է, որ սպառողների մոտ չշփոթելու հավանականությունը մոտ 10 անգամ ավելի մեծ է քան՝ շփոթվելունը:

Բողոքում նշված է, որ գրանցված նշանի իրավատերը չի գտնում, որ բողոքարկված նշանը շփոթելու աստիճան նման է իր նշանին և մտահոգված չէ, որ բողոքարկված նշանը կարող է որևէ շփոթության պատճառ հանդիսանալ, քանզի, հանդիսանալով հայկական խոշոր ընկերություն և ունենալով լուրջ իրավաբանական բաժին, որը զբաղվում է ընկերության ապրանքային նշանների պաշտպանության հարցերով և հետևում է Գործակալության կողմից հրապարակված հայտերին, չի առարկել հայտարկված նշանի գրանցմանը: Դա իր հերթին վկայում է այն մասին, որ գրանցված նշանի իրավատերն, որպես շահագրգիռ կողմ, չի գտնում, որ հայտարկված նշանը շփոթելու աստիճան նման է գրանցված նշանին: Հետևաբար, եթե երկու շահագրգիռ մասնավոր ընկերությունները մտահոգված չեն, որ իրենց ապրանքային նշանները կարող են շփոթություն առաջացնել սպառողների մոտ և

արդյունքում վնասել միմյանց տնտեսական շահերը, ապա պետական գրանցող մարմինը ևս չպետք է որևէ խոչընդոտ ստեղծի բողոքարկված նշանի գրանցման համար:

Նշված է, որ բողոքարկված նշանի իրավատերն արդեն ներդրել է լուրջ ֆինանսական միջոցներ իր արտադրությունը կազմակերպելու և բրենդինգն իրականացնելու համար և նշանի գրանցման անհիմն մերժումը կարող է ֆինանսական լուրջ խնդիրներ առաջացնել բողոքարկողի և վերջինիս տնտեսական գործունեության համար:

Կոլտեգիայի անդամը բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. ապրիլի 17-ին «Վիթիս գրուպ» ընկերության ներկայացուցիչ Ս. Կնայազյանի կողմից ներկայացվել է «КОБЧЕГ» (հայտի համարը N 20110200) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք: Նշվեց, որ հիշյալ ապրանքային նշանի գրանցման մերժման հիմք են ծառայել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» Կարգի 116-րդ կետի 2-րդ և 119-րդ կետի 1-ին ենթակետերը, համաձայն որոնց, որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում բողոքարկված նշանը մերժվել է, քանի որ այն շփոթելու աստիճան նման է արդեն գրանցված «ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ» (N3188, «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ, Երևան, Իսակովի պող.2) ապրանքային նշանին:

Կոլտեգիայի անդամը համառոտ ներկայացրեց բողոքի բովանդակությունը՝ նշելով որ բողոքարկողը իր հիմնավորումներում փորձել է ապացուցել, որ երկու նշանները շփոթելու աստիճան նման չեն և ներկայացրել է դրանց համեմատական բնութագիրը, ինչպես նաև արձանագրել է, որ այն ապրանքները որոնց համար այդ ապրանքային նշանները առկա են տարբեր են:

Կոլտեգիայի անդամը նշեց բողոքարկողի հիմնավորումը այն մասին, որ համաձայն Կարգի 126-րդ կետի, մերժման հիմք է հանդիսանում 116-123-րդ կետերում թվարկված բոլոր հատկանիշների առկայությունը և ի պատասխան մեկնաբանեց, որ ապրանքային նշանների նմանությունը որոշվում է, ոչ թե 116-123-րդ կետերում թվարկված բոլոր հատկանիշների առկայությամբ, այլ դրանց միջոցով, ինչպես նաև նշեց Կարգի 126-րդ կետի շարունակությունը այն մասին, որ ապրանքային նշանների նմանությունը որոշելիս օգտագործվում են նույնական կամ նման տարրի զբաղեցրած տեղի (դիրքի) նշանակությունը, իսկ տվյալ դեպքում ապրանքային նշանի հիմնական տարր է հանդես գալիս «КОБЧЕГ»-ը, որը ցանկացած սպառող կնույնականացնի «ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ»-ի հետ և հայտնեց Կոլտեգիայի այն դիրքորոշումը, որ նշանները իսկապես շփոթելու աստիճան նման են:

Կոլեգիայի անդամը անդրադարձավ բողոքարկողի այն հիմնավորմանը, որ ԱԾՄԴ-ի 33-րդ դասում ընդգրկված են ավելի քան 35 ակոհոլային խմիչքներ և ապրանքատեսակներ, իսկ գրանցված ապրանքային նշանի իրավատերը ցանկացել է իր ապրանքային նշանով պահպանել բացառապես «բրենդի» խմիչքը (հայկական կոնյակը): Ի տարբերություն Երևանի կոնյակի գործարանի, բողոքարկված նշանի իրավատերն իր ապրանքային նշանի հայտում նշել էր ավելի քան 30 (երեսուն) ապրանքատեսակներ, որոնք ընդհանրապես չեն պահպանվում գրանցված նշանով, սակայն այս դեպքում էլ, մերժման հիմք է հանդիսանում Կարգի 132, 133, 134 կետերը, որտեղ դրված են որոշակի չափանիշներ նույնականության և նմանատիպության վերաբերյալ:

Ընդհանուր վերլուծության արդյունքում, կոլեգիան առաջարկեց բողոքը մերժել:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 2-րդ բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Վիթիս գրուպ» ընկերության բողոքը և «KOBЧЕГ» (հայտի համարը 20110200) համակցված ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա. Ազիզյան